ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի մարտի 23-ի, ժամը 14:00-ի նիստի
N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արգամ Համլետի Արտաշյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Ա.Հ.Արտաշյանը 2015 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնում. նախ՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ ավագ դասախոս: Ա.Հ.Արտաշյանը 2008-2010 թթ. ամբիոնում աշխատել է որպես դասախոս: Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

Ա.Հ.Արտաշյանը 2016 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ստացել տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 12 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 8 է (2 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 2 դասախոսության նյութեր, որից 1-ը (անգլերեն)՝ համահեղինակությամբ, 3 գիտական հոդված՝ տպագրված ՀՀ գիտական ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ, 1 գիտական հոդված՝ տպագրված միջազգային ամսագրում):

Ա.Հ.Արտաշյանը ունենալով երկար տարիների դասավանդման փորձ, մշտապես աշխատում է ձեռք բերել նոր գիտելիքներ: Նա

աշխատասեր է և պարտաճանաչ: Ունենալով մարդկային բարձր որակներ, վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Ա.Հ.Արտաշյանին՝ մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 54-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 53, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի ավագ դասախոս, տնտեսագիտության թեկնածու Արգամ Համլետի Արտաշյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 17-ի N 177-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (հաստատված ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Արգամ Համլետի Արտաշյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.08՝ «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Դարբինյան**

2022 թ. մարտի 23
Երևան